ինքը այդչափ անգութ չէր, այլ միայն «փոսդ փարասի» (մորթի գին) պահանջեց։

Դա Խալոյի տան հաղար ոչխարի մորթն պահած էր, բաժանեց գիւղացւոց վերան, որոց տեղը պահանջեց մի մեծ գումար։

—Գոհ չէք կասէր նա, որ փոսդ կտամ, դրամ կը պահանջեմ, եթէ «դիշքիրասին» ևս պահանջելու լինիմ, ի՞նչ պիտի անէք։

Շատեր այս ծանր պահանջման չտոկալով՝ տուն տեղ թողին, փախան, ումանք ևս 3—5 մորթի գնոյն փոխարէն իւրեանց լաւ լաւ ձիանք տուին։

Խալոն ևս կը հատուցանէ «փոստփարասի» ի տեղ իւր նժոյգ ձին, որ միայն այն էր մնացած իւր հարըստութիւնից։

Ահմէտ աղան Մարտոյ գիւղի շրջականեր գտնուած Շահնազար, Խաստուր, Ջետրկան ևն. գիւղերու վերայ ևս ծանրանալով՝ որոցմէ ևս պահանջներ անելով՝ մի մեծ գումար կստանայ և կը բարձրանայ Ղլիճ կետուկի վերան։ Նա Անդաբի սահմանը մտաւ, չը մտաւ, լուր յղեց Տութաղ (երկու թաղ) գիւղի հայոց, որ պատրաստուին ընդունելութեան։

Տութաղ Անդաբու հարիւր գիւղօրէից ամենէն մեծն էր, նաև ունէր երկու թաղ և պարսպով ևս պատած էր։

Տութաղցիք վաղուց արդէն լսած էին Ահմէտ աղայի արածներն Մարտոյ գիւղի մէջ, խօսք մէկ արին.—«Ցրէք, էն աղիկ ա մեռնինք, Խալոյի տան օրին չընկնինք, ասացին ու պատրաստուեցան դիմադրելու։

Կէս օրին հրացանաձգութիւն սկսաւ, տևեց մինչև երեկոյ Հայեր կատաղաբար կռուեցան։